ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, Էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

Ք. Երևան 10 հոկտեմբերի 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԾԱԾԿԱԳԻՐ՝ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-23/27

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-23/27 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ է ներկայացրել նաև ԱՁ ՏԱՐՈՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ -ն /ՀՎՀՀ՝ 40600434, էլ. փոստ՝ hayk.galstya@mail.ru, հեռ. +37494414047/ (այսուհետ՝ Մասնակից):

04.09.2023 թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը ԱՁ ՏԱՐՈՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ –ին ճանաչել էր ընտրված մասնակից 12-րդ չափաբաժնի մասով և անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 22.09.2023 թվականին Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումների ներկայացնելու առաջարկ, սակայն Մասնակցի կողմից օրենքով սահմանված ժամկետում՝ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում 29.09.2023 թվականը ներառյալ չեն ներկայացվել «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-23/27-6» ծածկագրով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

«Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնման ընթացակարգի 12-րդ չափաբաժինը հայտարարվել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝ ԱՁ ՏԱՐՈՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԲԵԳՈՅԱՆ